

MICHEL BRÉAL

1915 Նոյեմբերի վերջերը բանասիրական գիտությունը զգալի կորուստ մ'ունեցաւ Académie des Inscriptionsի անդամ 84ամեայ ծերունի Michel Bréalի մահուամբ:

Բանասէր և դաստիարակ, ուսուցչապետ էր համեմատական քերականութեան և լեզուագիտութեան Ecole de Franceի մէջ, անդամ էր իտալական կաճառներու՝ ինչպէս Լինչէի՝ Հոովմայ՝ և Դորինոյի Ճեմարանին, Նոյնպէս Պրիւքսելի արքունի կաճառին, հիմնադիրներէն մին էր իտալ-Հելլէն Լինկերութեան, պատուոյ տիտղոսաւոր վարդապետ Յիւրիկի և Պոլոնիոյ համալսարաններուն, ընդհանուր վերահսկող բարձրագոյն ուսմանց՝ և վարժարանաց, վարիչ բարձրագոյն ուսմանց վարժարանի, Հանճարիմաց իտգարկու և հետազոտող, փայլուն մատենագիր, ծնած էր 1832 մարտ 26ին ի Լանտաւ (Պաւերայի), գաղղիացի ծնողաց զաւակ: Իւր ուսումները կատարեց ի Վիսսեմպուրկ, Մէց և Բարիզ, ուր Eugène Bournouffի առաջնորդութեամբ հմտացաւ սանսքրիթ և զենտ (հին պարսկական բարբառ) լեզուներու: 1860-1861ին զնաց ի Պեռլին հռչակաւոր ուսուցչապետաց դասախօսութեանց հետեւելու և կատարելագործելու իւր հմտութիւնըն արեւելեան լեզուաց և հնագիտութեան մէջ: Հոն ունեցաւ իրրեկ իրեն ուսուցիչ Weberը՝ Սանսքրիթի և հնդկագիտութեան և Boppը՝ համեմատական քերականութեան: Այս վերջնոյս զըլուխ-գործոց Հնդկրոպական լեզուաց համեմատական քերականութիւնը (որ չորս ընդարձակածաւալ հատորներէ կը բաղկանայ, և որոնց էջերու մէջ խիտ առ խիտ հայկական համեմատութիւնք ալ կը յաջորդեն իրարու) սքանչելի կերպով թարգմանեց գաղղիերէնի: Գաղղիա զատ Նալով զբաղեցաւ կայսերական մատենադարանի արեւելեան զրչագիրներու ուսու-

նասիրութեամբ. և Haseի մահուանէ վերջ, յաղթական մրցմամբ զբաւեց համեմատական լեզուագիտութեան ուսուցչական աթոռը, և զայն աւելի ևս պայծառացուց փայլուն, խորաքնին, և նորօրինակ դասախօսութեամբ մը:

Իւր բազմաթիւ անուանի և հետաքրքրական հեղինակութեանց մէջէն յիշենք հետեւի ուսումնասիրութիւնքը. «Ջորտագրի աւանդութեան և վետական հաւատարեաց յարերութիւնք» (1862) զոր Գաղղիոյ Արձանագրոց և Գեղեցիկ Կայրուութեանց ճեմարանը պսակեց մրցանակաւ. «Ուսումնասիրութիւն համեմատական դիցարանութեան», զոր՝ որ նոր զարկ ու մղում տուաւ համեմատական դիցարանութեան հետազոտութեանց. «Լեզուի մէջ ծածկեալ գաղափարներ», «Եւզուպեան Տախտակք» որուն համար կուպպիոյ քաղաքը, ի նշան երախտագիտութեան, պատուոյ քաղաքացիութեան տիտղոսը պարգեւեց իրեն. և այլն:

Հ. Յ. ԱԻԳԵՐ

ԱԶԳԵՐՈՒ ԳԱՂԱՓԱՐԱՆԻՇՆԵՐ

Ինչպէս ամէն քաղաք ունի իւր զինանշանը, և ինչպէս ամէն վերացական իր ունի իւր գաղափարանիշը որ զայն նիւթապէս կը ներկայացնէ, այսպէս ալ իւրաքանչիւր ազգերն ընդհանուր գաղափարով մը կը ներկայացունին սովորաբար որ և է նշանով մը, որ իր մէջ կ'ամփոփէ անոնց բնադրող նկարագիրը, կամ անոնց պատմութեան ամէնէն աւելի ցայտուն դէպք մը կը յիշեցնէ: Ոչ մէկ բան այնքան լաւ կերպով պիտի կարենար ներկայացնել ճարտական ժողովուրդը, ինչպէս կը ներկայացնէ քրիզմանդիմ աշնանային ծաղիկը: Տաճկաստանի գոյութեան պատճառն անգամ կատարելապէս ներկայացուած է մաւիկին մէջ զոր թուրքերը բիւզանդացիներէն ժառանգեցին: Եւ հռչակաւոր կնիւտաց ա-